թիւնների մտել, անդամ որոշ խոստումներ տուել, սակայն միութիւնը երբեք գլուխ չէր եկել։ Դրա համար հարկաւոր էին բոլորովին այլ միջոցներ, որ անշուշտ նոյնպէս լաւ գիտէր ժամանակի աչքի ընկնող հայ հոգեւորականը։

Որ Ստեփաննոս Սալմաստեցու առաքելութիւնը գերազանցօրէն քաղաքական նպատակ ունէր — այդ մասին պատմական փաստերը ոչ մի կասկած չեն թողնում։ Կրօնական մերձեցումը, այո՛, մի պատրուակ էր միայն՝ քաղաքական բանակցութիւնների համար նըպաստաւոր հող ստեղծելու եւ ուրիշ ոչինչ։ Եթէ այդ այդպէս չլինէր, հապա ի՞նչ գործ ունէր Ստեփաննոս կաթողիկոսը Եւրոպայի զանազան արքունիքներում։ Ինչպէս երեւում է՝ Հռոմից յուսախաբուած, Հայաստանի փրկութիւնը նա փորձում է որոնել Արեւմուտքի աշխարհական վեհապետների մօտ։ Ուստի Հռոմից գնում է Գերմանիա, լինում է Կարլոս Ե. կայսեր մօտ. այնտեղից անցնում է Լեհաստան, յետոյ Ռուսաստան եւ դատարկաձեռն վերադառնում է Էջմիածին։

Եւ վերջապէս, մենք ունինք պատմական մի դեղեցիկ փաստաթուղթ, որը անհերքելիօրէն ապացուցում է, որ Սալմաստեցու առաքելութիւնը միայն եւ միայն քաղաքական նպատակ ունէր։ Դա այն աղերսագիրն է, որ հայոց կաթողիկոսը ներկայացրեց Վենետիկի հասարակապետութեանը — պարսկական Հայաստանի հայ երեւելիների անունից։ Աղերսագիրը վերջանում է այս խօսքերով. «Եւ մենք խեղճ հայքս ի մասին պարսից, ի ներքոյ խիստ տառապանաց այլազգենից, կու սպասեմք ձեր գալուն, ինչպէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի։ Գիտեմք, որ ի զգօնութենէ տէրանց Վենետաց պիտի սկսի մեր փրկութիւնն եւ ազատութիւնն։ Կ՚ուղարկեմք մեր Պատրիարքը Ստեփաննոս չատ պատճառաց համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր, որ յարգութիւն ընծայէ ձեզ եւ յետոյ շնորհք ընէք իրեն, որ կարենայ երթալ եւ համբուրել զոտս ամենասուրբ Պապին»1)։

Անշուշտ, նման աղերսագրեր ներկայացրել էր նա եւ միւս արքունիքներում։ Բայց դժբախտ կաթողիկոսի դիմումները մնացին ձայն բարբառոյ յանապատի։ Եւրոպական պետութիւններից եւ ոչ մէկը չկամեցաւ օգնութեան ձեռք մեկնել բարբարոսութեան ճանկերում խողխողուող հայ ժողովրդին։ Անդամ բոլոր աշխարհի տառապողների անունից խօսող եւ արքայութեան բանալիները իր ձեռքում բռնած Պապը մատը մատին չխփեց։

Այնուհետեւ նոյն քաղաքականութիւնը որդեգրեց նաեւ իր աթոռակիցն ու յաջորդը՝ Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսը։ Սա եւս ժամանակի դառնութիւններից յուսահատ, դուցէ եւ քաղաքական նոյն նպատակով Արեւմուտք անցնելու մտադրութեամբ՝ գնաց Սեբաստիա։ Բայց չկարողանալով անձամբ աւելի առաջ գնալ, ուղարկեց մի պատգամաւորութիւն դէպի Հռոմ, երեք հոգուց բաղկացած — Արգար դպիր Եւդոկիացի (Թոխաթցի), որդին Սուլթան եւ Աղէքսանդր անունով մէկ քահանայ (1562 թ.)։ Տուեց նրանց մի նամակ եւ ընծաներ Պապին տանելու։

Անցաւ ամբողջ մէկ տարի եւ սակայն կաթողիկոսը ոչ մի լուր չունէր պատգաւորութեան մասին։ Անդամ չգիտէր՝ նա տեղ հասե՞լ է, թէ ոչ։ Ուստի յաջորդ տարին գրում է մի նամակ եւս Պիոս Դ. Պապին, նամակի սկզբում դնելով ինչ որ խորհրդաւոր նշաններ (ծածկագիր), որ միայն Արգարը կարող էր վերծանել։

Նամակի մէջ, սովորական քաղաքավարական արտայայտութիւններից յետոյ, բացատրում է, թէ ինչո՞ւ աւելի հանգամանօրէն եւ բաց կերպով չի կարողացել գրել. որովհետեւ — ասում է — «ոչ միայն արտաքին թշնամու, այլ եւ չար քրիստոնեաների երկիւղից» — «ձեռք մեր ամփոփեալ են եւ լեզուք մեր կարկեալ ի մէջ այլակրօնից»։ Այդ պատճառով խնդրում է ընդունել Արգարին — եթէ հասել է տեղ — որպէս իր ներկայացուցիչը եւ նրան լըսել, «նա ինքն եղիցի որպէս բերան մեր». որից յետոյ յոյս է յայտնում, թէ շուտով իրենց ազատութիւն կը ծագի Պապի շնորհիւ՝ «ընդ հուպ ակն ունել ազատութեան ի դերութենէ աստի» (Զամչեան, Գ. եր. 519–520)։

Կարծում ենք՝ կրկին անվիճելի է, որ Միքայէլ կաթողիկոսի այս նամակն էլ — ինչպէս նաեւ Արգարի պատգամաւորութիւնը —

1) Հ. Ալիշան, «Հայ Վենետ», 1896 թ. եր. 329, Լէօ, «Հայկ. Տպագր. 1901, Ա. եր. 49։